## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ
**30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 290**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Մարինե Խաչատրյանի դիմումը, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մարինե Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Պտղնի <<Նոր>> թաղամաս, 1-ին փողոց, թիվ 69 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 15.51 քմ պարիսպը համարել օրինական:

2. Սահմանել,որ հողամասի սեփականատերը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Վերին Պտղնի համայնքի բյուջեի N 900105231212 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 29835/ քսանինն հազար ութ հարյուր երեսունհինգ / ՀՀ դրամ օրինականացման վճարը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ` ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**2021թ.նոյեմբերի 30**
**գ.Վերին Պտղնի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 291**

## ՆԱՐԻՆԵ ԼԱԼԱՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, ԱՐՓԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՍԻԼՎԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչներ Նարինե Լալայանի, Կարինե Թումանյանի, Արփիկ Հարությունյանի և Սիլվարդ Գրիգորյանի դիմումները, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ որոշում եմ.

Համայնքի 2021 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի 10 խմբի 7-1 ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչներ Նարինե Լալայանին, Կարինե Թումանյանի, Արփիկ Հարությունյանին և Սիլվարդ Գրիգորյանին յուրաքանչյուրին տալ 40000-ական (քառասուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թ.դեկտեմբերի 01
գ.Վերին Պտղնի